

Հ Հ կ ե ն տր ո ն ա կ ա ն բ ա ն կ ի տ ե ղ ե կ ա գ ի ր

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ի Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ա Վ Ա Ն Բ Ա Ն Կ Ի Խ ՈՐ Հ Ր Դ Ի Ե Վ Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ի ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- Հ Հ ԿԲ խորհրդի որոշումը «Արմենիան Քարդ» ՓԲԸ ՎԿ-ին ԱրՔաՓեյ ակնթարթային վճարումների վճարային համակարգի ստեղծման և գործունեության թույլտվություն տրամադրելու մասին..... 3
- Հ Հ ԿԲ խորհրդի որոշումները «ՆՈՐ ԶՈՎՔ» ՍՊԸ-ին, «ԱՐՄԵՆԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ թիվ 2 մասնաճյուղին արտարժույթի առուվաճառքի լիցենզիա տրամադրելու մասին..... 3
- Հ Հ ԿԲ խորհրդի որոշումները «Ռ.Գ.Ա.Տ.» ՍՊԸ-ին տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին..... 3
- Հ Հ ԿԲ խորհրդի որոշումը «ՖԻԴՈ ԻՆՎԵՍՏ» ՓԲԸ-ն գրանցելու և ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա տրամադրելու մասին..... 3
- Հ Հ ԿԲ նախագահի որոշումները «ՕԿ Կրեդիտ» ՈՒՎԿ ՍՊԸ «Մալաթիա» մասնաճյուղը, «Արֆին» ՎՄ ՍՊԸ «Վանաձոր» ներկայացուցչությունը, «ԲԼԵՍՍ» ՈՒՎԿ ՍՊԸ «Գյումրի» մասնաճյուղը գրանցելու մասին..... 3
- Հ Հ ԿԲ նախագահի որոշումները 1 փոխանակման կետի նկատմամբ տուգանք կիրառելու, 3 փոխանակման կետի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ..... 3
- Հ Հ ԿԲ խորհրդի թիվ 88Լ որոշումը Հ Հ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքների սահմանման մասին..... 3
- Հ Հ ԿԲ խորհրդի թիվ 71-Ն որոշումը «Իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալության կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության ձևը, տրամադրման կարգը և ժամկետները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 273-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»..... 4
- Հ Հ ԿԲ խորհրդի թիվ 72-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»..... 24
- Հ Հ ԿԲ խորհրդի թիվ 73-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»..... 29
- Հ Հ ԿԲ խորհրդի թիվ 74-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»... 30
- Հ Հ ԿԲ խորհրդի թիվ 75-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2022 թվականի մայիսի 5-ի թիվ 78-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»..... 33
- Հ Հ ԿԲ խորհրդի թիվ 76-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2020 թվականի փետրվարի 21-ի թիվ 21-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»..... 34
- Հ Հ ԿԲ խորհրդի թիվ 77-Ն որոշումը «2022–2023 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Ազգային դրամի 30 տարին», «Հրանտ Շահինյան -100», «Հակոբ Հակոբյան-100», «Հայկական կինոյի հիմնադրման 100-ամյակ», ««Արարատ 73»-ի ոսկե դուբլի 50-ամյակ» արծաթե հուշադրամները շրջանառության մեջ դնելու մասին»..... 35

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- **ԱրՔաՓԵյ ակնթարթային վճարումների վճարային համակարգի ստեղծման և գործունեության թույլտվություն է տրամադրվել** «Արմենիան Քարդ» ՓԲԸ վճարահաշվարկային կազմակերպությանը (որոշում թիվ 89Ա):
- **Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել** «ՆՈՐ ԶՈՎՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, «ԱՐՄԵՆԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» փակ բաժնետիրական ընկերության թիվ 2 մասնաճյուղին (որոշումներ թիվ 90Ա, 96Ա):
- **Ուժը կորցրած է ճանաչվել** «Ռ.Գ.Ա.Տ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիան (որոշում թիվ 91Ա):
- **Գրանցվել և ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա է տրամադրվել** «ՖԻԴՈ ԻՆՎԵՍՏ» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 103Ա):
- **Գրանցվել են** «ՕԿ Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Մալաթիա» մասնաճյուղը, «Արֆին» վարկային միություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Վանաձոր» ներկայացուցչությունը, «ԲԼԵՍՍ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Գյումրի» մասնաճյուղը (որոշումներ թիվ 1/293Ա, 1/303Ա, 1/341Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 փոխանակման կետի նկատմամբ **կիրառվել է պուզանք** 2 400 000 դրամ գումարի չափով (որոշում թիվ 1/301Ա), 3 փոխանակման կետի **հայտարարվել է նախազգուշացում**՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/289Ա, 1/301Ա, 1/326Ա):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «գ» և «ե» կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2023 թ. մայիսի 2-ի թիվ 88Լ որոշմամբ ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 10.5%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպո գործիքի տոկոսադրույքը՝ 12.0%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամական միջոցների ներգրավման գործիքի տոկոսադրույքը՝ 9.0%:

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության ձևը, տրամադրման կարգը և ժամկետները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 273-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին*

Նպատակ ունենալով ներդնելու իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունների տրամադրման առցանց համակարգ և սահմանելու այդ համակարգով հաշվետվությունների տրամադրման առավել մանրամասն կանոններ,

հիմք ընդունելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը և 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Սահմանել «Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության տրամադրման կարգը և ժամկետները»՝ համաձայն Հավելված 1-ի:
2. Սահմանել «Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության ձևը»՝ համաձայն Հավելված 2-ի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 7-ի «Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման թիվ 008 հաշվետվության ձևը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի թիվ 14-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 273-Ն որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
նախագահի տեղակալ Հովհաննես Խաչատրյան
1 հունիսի 2023 թ., N 71-Ն**

* Ոչ պաշտոնական հրապարակություն:
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2023 թ. մայիսի 30-ին (ՀՀԳՏ, 09.06.2023):

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ
ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության տրամադրման կարգը և ժամկետները» (այսուհետ՝ Կարգ) սահմանում է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության (այսուհետ նաև՝ Հաշվետվություն տրամադրող անձ) կողմից «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված հաշվետվությունների տրամադրման կարգը և ժամկետները:

2. Կարգում հասկացություններն օգտագործվում են Օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:

3. Հաշվետվությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից՝ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի և 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ 6-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետով սահմանված դեպքերում:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունները Ֆինանսական դիտարկումների կենտրոնին են տրամադրվում Ֆինանսական դիտարկումների կենտրոնի հաշվետվությունների ներկայացման առցանց համակարգի (այսուհետ՝ Առցանց համակարգ) միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի թիվ 81-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվությունների ներկայացման ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելու կարգի» պահանջների պահպանմամբ:

5. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոնին է տրամադրվում Առցանց համակարգի «Առցանց լրացում» տարբերակի միջոցով: Հաշվետվությունը կարող է տրամադրվել նաև Առցանց համակարգի «Վեբ-սերվիսով մուտքագրում» և «Վերբեռնում» տարբերակների միջոցով: Առցանց համակարգի խափանման դեպքում հաշվետվությունը տրամադրվում է էլեկտրոնային կրիչով՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի հետ համաձայնեցված կարգով:

6. Հաշվետվությունը տրամադրված է համարվում, եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հաշվետվություն տրամադրող անձը չի ստանում սխալի վերաբերյալ հաղորդագրություն: Սխալի վերաբերյալ հաղորդագրություն ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ

աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է հաշվետվության ճշգրտված տարբերակը: Տվյալ դեպքում հաշվետվության տրամադրումը չի համարվում ժամկետանց: Սխալի վերաբերյալ հաղորդագրությունը ստացվում է <https://reports.fmc.am> հղմամբ հասանելի Առցանց համակարգում:

7. Այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը պարզում է, որ Ֆինանսական դիտարկումների կենտրոնին տրամադրված գործարքի վերաբերյալ հաշվետվությունը ենթակա չէր պարտադիր տրամադրման, այդ մասին գրավոր տեղեկացնում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնին:

8. Հաշվետվությունը լրացվում է հայերենով, «յունիկոդ» տառատեսակով և մեծատառերով, առանց չափերտների: «Անուն»/ «Անվանում», «Ազգանուն», «Հայրանուն» դաշտերը լրացվում են անգլերեն, երբ անհրաժեշտ տվյալները Հաշվետվություն տրամադրող անձին հասանելի են միայն անգլերենով: Եթե նշված տվյալները հասանելի են այլ օտար լեզվով, ապա այդ դաշտերը լրացվում են հայերեն կամ անգլերեն:

9. Տրամադրվող հաշվետվությունը պետք է բավարարի Հավելված 2-ով սահմանված հաշվետվության ձևին ներկայացվող պահանջներին, ինչպես նաև xml սխեմայի ձևավորման թվայնացված աղյուսակներին: Ցանկացած տրամադրված հաշվետվություն, որը չի բավարարում նշված պահանջները, դիտվում է թերի կամ սխալ լրացված հաշվետվություն և հանգեցնում է Օրենքով նախատեսված պատասխանատվության:

10. Յուրաքանչյուր պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի կամ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ տրամադրվում է առանձին հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

11. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոնին է տրամադրվում երեք աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվության տրամադրման օրերի հաշվարկը սկսվում է հաշվետվություն տրամադրող անձի կողմից գործարքի կատարման օրվան հաջորդող աշխատանքային օրվանից և ավարտվում է այդ օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը՝ ժամը 18:00-ին:

12. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է տրամադրվում նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ը:

13. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության տրամադրման անհնարինությունը կարող է պայմանավորված լինել բացառապես Առցանց համակարգի խափանման հետ կապված ծրագրաապարատային խնդիրներով:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2023 թվականի մայիսի 30-ի թիվ 71-Ն որոշման

ՁեՎ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՍ
ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը տրամադրվում է XML սխեմայի ձևաչափով՝ պահպանելով ստորև սահմանված պահանջները:

Կետ	Անվանում	Տիպ	Նիշերի քանակ	Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության դաշտեր	Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվության դաշտեր	Լրացման կարգ	Հաշվետվության XML սխեմայում դաշտի անվանում
1*	Հաշվետվության տեսակը	բաժին		Այո	Այո	Ընտրվում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը կամ պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը:	report_register_fmcrn/ report_register_str_fmcrn
2*	Հաշվետվության անվանումը	բաժին		Այո	Այո		report_name
3*	Հաշվառման համարը	թիվ	8	Այո	Այո	Լրացվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից տրամադրված հաշվառման համարը:	fmcrn
4*	Ուղարկման ամսաթիվը	տեքստ	6	Այո	Այո	Լրացվում է հաշվետվության ուղարկման օրը, ամիսը, տարին՝ ddmmyy տեսքով՝ dd-օր, mm-ամիս, yy-տարի:	sent_date
5*	Հերթական համարը	տեքստ	4	Այո	Այո	Լրացվում է հաշվետվության հերթական համարը՝ տվյալ օրվա դրությամբ (օրինակ՝ տվյալ օրվա առաջին հաշվետվության հերթական համարը կլինի՝ 0001):	seq_number
6	Ուղղման կամ լրացման հերթական համարը	թիվ	1- 3	Այո	Այո	Լրացվում է տվյալ հաշվետվության ուղղման կամ լրացման նպատակով տրամադրվող հաշվետվության հերթական համարը: Ենթակա է պարտադիր լրացման, եթե հաշվետվությունն ուղարկվում է նախկինում ուղարկված հաշվետվությունում առկա սխալի կամ ճշման նպատակով, ինչպես նաև գործարքի պայմանի փոփոխության կամ այն դեպքում, եթե սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն:	error_code
7	Ուղղման կամ լրացման պատճառը	տեքստ	մինչև 1000	Այո	Այո	Լրացվում են ուղղում կամ լրացում կատարելու համար հիմք հանդիսացած պատճառները և հանգամանքները: Ենթակա է պարտադիր լրացման, եթե 6-րդ կետում լրացվել է ուղղման կամ լրացման հերթական համարը:	error_reason
8*	Գործարքի կամ գործարար հարաբերության նկարագրությունը	բաժին		Այո	Այո	Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն տրամադրելիս, եթե գործարքը դեռևս չի կատարվել, կամ գործարար հարաբերությունը դեռևս չի հաստատվել, ապա՝ 9-րդ կետում լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ տրամադրվել է գործարք կատարելու կամ գործարար հարաբերություն հաստատելու առաջարկը: 10-րդ կետը կարող է չլրացվել: 11-րդ և 12-րդ կետերում լրացվում է 0:	transaction_description

9*	Կատարման կամ հաստատման ամսաթիվը	ամսա-թիվ	10	Այո	Այո	Լրացվում է տեղեկացման ենթակա գործարքի կատարման (օրինակ՝ վավերացման, հաստատման) կամ գործարար հարաբերության հաստատման տարին՝ 4-նիշ, ամիսը՝ 2-նիշ, օրը՝ 2-նիշ (yyyy-mm-dd):	trans_date
10*	Արժույթը	տեքստ	3	Այո	Այո	Լրացվում է այն արժույթը, որով կնքվել է գործարքը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 1 ցանկից:	currency
11*	Գումարը տվյալ արժույթով	թիվ	մինչև 19	Այո	Այո	Լրացվում է գործարքի գումարի չափը այն արժույթով, որով կնքվել է գործարքը:	amount
12*	Գումարը համարժեք ՀՀ դրամին	թիվ	մինչև 19	Այո	Այո	Լրացվում է գործարքի գումարի դրամական արտահայտությունը՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով: Եթե «Արժույթը» դաշտում լրացվում է ՀՀ դրամ, ապա «Գումարը համարժեք ՀՀ դրամին» դաշտում լրացվում է նախորդ դաշտում լրացված գումարը:	amount_amd
13	Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկություններ	տեքստ	մինչև 3000	Այո	Այո	Լրացվում են գործարքին կամ գործարար հարաբերությանն առնչվող՝ հաշվետվություն տրամադրող անձի կողմից կարևորվող այլ տեղեկություններ: Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն տրամադրելու դեպքում նշվում են գործարքին կամ գործարար հարաբերությանն առնչվող հավելյալ տեղեկություններ, այդ թվում՝ առնվազն թվարկելով կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվությանը կցվող համարակալված և բովանդակությանը համապատասխան անվանում ունեցող փաստաթղթերը:	transaction_desc
14*	Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը	բաժին		Այո	Այո		transaction_type
15*	Տեսակը	թիվ	6	Այո	Այո	Լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 2 ցանկից:	transaction
16*	Առարկան	թիվ	6	Այո	Այո	Լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության առարկան՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 3 ցանկից: «Արժեթուղթ» նշելու դեպքում 17-րդ կետում լրացվում է արժեթղթի տեսակը, այն թողարկող կազմակերպության անվանումը, տեղաբաշխողի վերաբերյալ տվյալները, ինչպես նաև արժեթուղթը նույնականացնող այլ տվյալների վերաբերյալ տեղեկությունները: «Շարժական այլ գույք» նշելու դեպքում 17-րդ կետում լրացվում են այդ գույքի անվանման և նույնականացման այլ տվյալների վերաբերյալ տեղեկությունները: «Անշարժ գույք» նշելու դեպքում 17-րդ կետում պարտադիր լրացվում են այդ գույքի անվանման, նույնացման համարի և անհատականացնող այլ տվյալների մասին տեղեկությունները, օրինակ՝ եթե անշարժ գույքը հողամաս է, ապա պետք է նշվի հողամասի չափի և նշանակության (տնամերձ, արտադրական, գյուղատնտեսական) վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև պարտադիր լրացվում է 18-րդ կետը: «Գույքային իրավունք» նշելու դեպքում 17-րդ կետում պարտադիր լրացվում են այդ գույքային իրավունքի վերաբերյալ տեղեկությունները: «Դրամական գնահատում ունեցող այլ իրավունք» նշելու դեպքում 17-րդ կետում պարտադիր լրացվում են այդ իրավունքի վերաբերյալ տեղեկությունները:	details
17	Առարկայի նկարագրություն	տեքստ	մինչև 1000	Այո	Այո	Լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության առարկայի նկարագրությունը:	other_details
18	Անշարժ գույքի գտնվելու վայրը	տեքստ	մինչև 1000	Այո	Այո	Լրացվում է անշարժ գույքի գտնվելու վայրի (հասցեի) վերաբերյալ տեղեկատվությունը (վավերապայմանները՝ մարզ, համայնք,	location

						ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտ (թաղամաս, հրապարակ, փողոց, պողոտա, նրբանցք, անցում, փակուղի, զբոսայգի և այլն)	
19	Ձևավորման, օտարման (ծեղբերման), փոփոխության արդյունքում կանոնադրական (բաժնետիրական և այլն) կապիտալի չափը	թիվ	մինչև 19	Այո	Այո	Լրացվում է կատարված գործարքի արդյունքում ձևավորված կանոնադրական (բաժնետիրական և այլն) կապիտալի չափը	capital_size
20*	Կասկածելի գործարք կամ գործարար հարաբերություն	բաժին		Այո	Ոչ		suspicios
21*	Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը կամ տիպաբանությունը	տեքստ		Այո	Ոչ	<p>Լրացվում է գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու չափանիշ(ներ)ը կամ տիպաբանություն(ներ)ը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 4 ցանկից: Եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու չափանիշը կամ տիպաբանությունը սահմանված չէ նախատեսված իրավական ակտերում, ապա նշվում է «Այլ»:</p> <p>«Լիազոր մարմնի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն» ընտրելու դեպքում 22-րդ կետում լրացվում է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2016 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 1/711-Ա որոշմամբ հաստատված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման բարձր ռիսկի և կասկածելիության չափանիշների վերաբերյալ» ուղեցույցի համապատասխան բաժինը և նկարագրությունը (օրինակ՝ 2.1.2.2. Արտասովոր և կասկածահարույց գործողություններ, «Հաճախորդն ակնհայտ ավելորդ ջանքեր է գործադրում իր պատասխանները համոզիչ դարձնելու համար»), և/կամ տիպաբանության հերթական համարը և անվանումը (օրինակ՝ «14. Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների միջոցով ահաբեկչության ֆինանսավորումը):</p> <p>«Հաշվետվություն տրամադրող անձի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն» ընտրելու դեպքում 22-րդ կետում լրացվում են հաշվետվություն տրամադրող անձի համապատասխան իրավական ակտի դրույթի կամ տիպաբանության նկարագրությունը, հերթական համարը կամ անվանումը:</p> <p>«Այլ» նշելու դեպքում 22-րդ կետում լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության այլ հիմք(եր)ի հակիրճ՝ անվանման կամ վերնագրի նմանեցված բնութագիրը:</p>	<p>criteria</p> <p>cr1</p> <p>cr2</p> <p>cr3</p>
22*	Չափանիշի կամ տիպաբանության նկարագրությունը	տեքստ	մինչև 1000	Այո	Ոչ	Լրացվում է կասկածելի գործարքի չափանիշի կամ տիպաբանության նկարագրությունը:	other_cr
23*	Կասկածների նկարագրությունը	տեքստ	մինչև 3000	Այո	Ոչ	Լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության նախապատմությունը (վերլուծություն նախաձեռնելու առիթը և հանգամանքները, ժամկետը և ժամանակահատվածը, սուբյեկտների ամբողջական շրջանակը, ինչպես նաև կիրառված վերլուծական գործիքները և օգտագործված տեղեկատվական աղբյուրները), նկարագրվում է վերլուծության ընթացքը, այդ թվում՝ հաճախորդի ինքնությանը և կարգավիճակին, գործելակերպին և վարքագծին, գործարքի կամ գործարար հարաբերության բնույթին և տեսակին, գործարքում օգտագործվող պրոդուկտին կամ գործարքի կատարման եղանակին վերաբերող փաստերը և դեպքերը և բոլոր այն հանգամանքները, որոնք վերլուծության ընթացքում հաշվետվություն տրամադրող անձը որակել է որպես կասկածելի: Այս դաշտում կարող	doubt_descripti on

						են նկարագրվել նաև հետագա հնարավոր զարգացումների վերաբերյալ հաշվետվություն տրամադրող անձի կանխատեսումները:	
24	Ներգրավված անձինք	տեքստ	մինչև 3000	Այո	Ոչ	Լրացվում են կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության մեջ ներգրավված անձանց տվյալները (անուն, ազգանուն, անձնագրային տվյալները՝ առկայության դեպքում), ինչպես նաև այդ անձանց վերաբերյալ հաշվետվություն տրամադրող անձին հայտնի այլ տեղեկատվությունը:	rel_persons
25	Կապված հաշվետվությունը	տեքստ	մինչև 25	Այո	Ոչ	Լրացվում է նախկինում ուղարկված հաշվետվության անվանումը՝ «Հաշվառման համարը»-«Հաշվետվության ուղարկման ամսաթիվը»-«Հաշվետվության հերթական համարը»-«Ուղղման (լրացման) հերթական համարը»: Ենթակա է պարտադիր լրացման, եթե տրամադրվող հաշվետվությամբ կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը, ըստ հաշվետվություն տրամադրող անձի, պատճառահետևանքային կամ այլ առումով կապված է հաշվետվություն տրամադրող անձի կողմից նախկինում հաշվետվությամբ տրամադրված գործարքի հետ:	rel_report
26*	Տիրապետում է իրական շահառուի մասին տեղեկատվությանը	թիվ	1	Այո	Ոչ	Լրացվում է հաշվետու անձի կողմից իրական շահառուի վերաբերյալ տեղեկատվությանը տիրապետելու փաստը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 9 ցանկից: Լրացվում է «Ոչ», եթե տեղի է ունեցել գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման փորձ, երբ հաշվետվություն տրամադրող անձը չի կարողանում ստանալ տեղեկատվություն այն մասին, թե արդյոք գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու, թե՛ ոչ: Այս դեպքում 27-րդ կետում «Իրական շահառու» գործարքի կողմը չի լրացվում:	ben_no
27*	Գործարքի կամ գործարար հարաբերության կողմերը	բաժին		Այո	Այո	Լրացվում է իրավաբանական անձի, հաճախորդի, լիազորված անձի և իրական շահառուի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 10-ի ցանկից: «Իրավաբանական անձ» գործարքի կողմի ներքո լրացվում է այն իրավաբանական անձի տվյալները, որի կանոնադրական (բաժնեհավաք և այլն) կապիտալում բաժնեմասի (մասնակցության, փայի և այլն) օտարման (ծեղբերման) կամ կանոնադրական (բաժնեհավաք և այլն) կապիտալի ձևավորման կամ փոփոխության հետ կապված կատարվում է պետական գրանցում: «Իրավաբանական անձ» և «Հաճախորդ» գործարքի կողմերը ենթակա են պարտադիր լրացման բոլոր գործարքների դեպքում: «Իրավաբանական անձ» և «Հաճախորդ» վերաբերյալ տվյալները լրացվում են 29, 32-55 կետերով սահմանված կարգով: «Լիազորված անձ» գործարքի կողմը ենթակա է պարտադիր լրացման իրավաբանական անձ հաճախորդի դեպքում, ինչպես նաև՝ ֆիզիկական անձ հաճախորդի դեպքում գործարքը կամ գործարար հարաբերությունը լիազորված անձի միջոցով կատարվելու պարագայում՝ ընտրելով Աղյուսակ 8 ցանկից: «Լիազորված անձ»-ի վերաբերյալ տվյալները լրացվում են 29, 30, 32-55 կետերով սահմանված կարգով: «Իրական շահառու» գործարքի կողմը ենթակա է պարտադիր լրացման կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության դեպքում: «Իրական շահառու»-ի վերաբերյալ տվյալները լրացվում են 31, 32-50 կետերով սահմանված կարգով:	side_section

28*	Գործարքի կամ գործարար հարաբերության կողմը	թիվ	1	Այո	Այո	Լրացվում է գործարքի կողմը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 10 ցանկից:	side_type
29*	Գործարքի կամ գործարար հարաբերության կողմի տեսակը	թիվ	1	Այո	Այո	Լրացվում է գործարքի կողմի տեսակը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 11-ի ցանկից, իսկ լիազորված անձի դեպքում՝ սույն հավելվածի Աղյուսակ 8 ցանկից:	side_subtype
30	Լիազորող անձ	թիվ	1-ից մինչև հաճախորդների առավելագույն քանակը	Այո	Այո	Լրացվում է այն հաճախորդի ծրագրային հղման համարը, ում լիազորված անձն է հանդիսանում տվյալ անձը:	auth_clients
31*	Իրական շահառուի վերաբերյալ տեղեկություններ	տեքստ	մինչև 3000	Այո	Ոչ	Լրացվում են գործարքի կամ գործարար հարաբերության, գործարքի կողմերի և իրական շահառուի միջև առկա կապի վերաբերյալ մանրամասները:	ben_information
32*	Անուն (անվանում)	տեքստ	մինչև 256	Այո	Այո	Լրացվում է ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ անունը կամ իրավաբանական անձի անվանումը: Ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ անունը կամ իրավաբանական անձի անվանումը լրացվում է այնպես, ինչպես նշված է անձը հաստատող փաստաթղթում/ պետական գրանցման վկայականում:	first_name
33*	Ազգանունը	տեքստ	մինչև 256	Այո	Այո	Լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը՝ 32-րդ կետում նշված կարգով:	last_name
34	Հայրանունը	տեքստ	մինչև 256	Այո	Այո	Լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հայրանունը՝ 32-րդ կետում նշված կարգով:	family_name
35*	Ծննդյան ամսաթիվը	ամսա-թիվ	10	Այո	Այո	Լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ծննդյան տարին՝ 4-նիշ, ամիսը՝ 2-նիշ, օրը՝ 2-նիշ (yyyy-mm-dd):	dob
36*	Բնակության վայր (գտնվելու վայր)	տեքստ	մինչև 256	Այո	Այո	Ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում լրացվում է այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը մշտապես կամ առավելապես բնակվում են: Իրավաբանական անձի դեպքում լրացվում է իրավաբանական անձի մշտական գործող մարմնի գտնվելու վայրի հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը))	address
37*	Բնակության քաղաքը	տեքստ	մինչև 256	Այո	Այո	Ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում լրացվում է այն քաղաքը կամ գյուղը, որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը մշտապես կամ առավելապես բնակվում են: Իրավաբանական անձի դեպքում լրացվում է իրավաբանական անձի մշտական գործող մարմնի գտնվելու վայրի քաղաքը կամ գյուղը:	city
38*	Բնակության մարզը	տեքստ	մինչև 256	Այո	Այո	Ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում լրացվում է այն մարզը, որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը մշտապես կամ առավելապես բնակվում են: Իրավաբանական անձի դեպքում լրացվում է իրավաբանական անձի մշտական գործող մարմնի գտնվելու վայրի մարզը:	region
39*	Բնակության երկիրը	տեքստ	2	Այո	Այո	Ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում լրացվում է այն երկիրը, որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը մշտապես կամ առավելապես բնակվում են: Իրավաբանական անձի դեպքում լրացվում է իրավաբանական անձի մշտական գործող մարմնի գտնվելու վայրի երկիրը: Երկիրը ընտրվում է սույն հավելվածի Աղյուսակ 5 ցանկից:	country
40	Գրանցման հասցեն	տեքստ	մինչև 256	Այո	Այո	Լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), որտեղ ֆիզիկական անձը հաշվառված է:	r_address
41	Գրանցման քաղաքը	տեքստ	մինչև 256	Այո	Այո	Լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ այն քաղաքը կամ գյուղը, որտեղ ֆիզիկական անձը հաշվառված է:	r_city

42	Գրանցման մարզը	տեքստ	մինչև 256	Այո	Այո	Լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ այն մարզը, որտեղ ֆիզիկական անձը հաշվառված է:	r_region
43	Գրանցման երկիրը	տեքստ	2	Այո	Այո	Լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ այն երկիրը, որտեղ ֆիզիկական անձը հաշվառված է՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 5 ցանկից:	r_country
44*	Քաղաքացիությունը	տեքստ	2	Այո	Այո	Լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ քաղաքացիությունը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 5 ցանկից:	citizenship
45	Հանրային ծառայությունների համարանիշը	տեքստ		Այո	Այո	Լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հանրային ծառայությունների համարանիշը:	socialnum
46*	Անձը հաստատող փաստաթղթի տեսակը	տեքստ	3	Այո	Այո	Լրացվում է անձնագիրը, նույնականացման քարտը կամ նորմատիվ իրավական ակտով սահմանված՝ ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անձը (ինքնություն) հաստատող այլ փաստաթուղթը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 6 ցանկից:	doc_type
47*	Փաստաթղթի սերիան և համարը	տեքստ	մինչև 16	Այո	Այո	Լրացվում է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» դաշտում նշված փաստաթղթի սերիան, համարը, ինչպես նշված է փաստաթղթում:	doc_number
48*	Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը	ամսաթիվ	10	Այո	Այո	Լրացվում է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» դաշտում նշված փաստաթղթի տրամադրման տարին՝ 4-նիշ, ամիսը՝ 2-նիշ, օրը՝ 2-նիշ (yyyy-mm-dd):	date_of_issue
49*	Ում կողմից է տրամադրվել	տեքստ	մինչև 256	Այո	Այո	Լրացվում է այն պետական մարմնի անվանումը կամ ծածկագիրը, որի կողմից տրամադրվել է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» դաշտում նշված փաստաթուղթը:	giver
50*	Փաստաթղթի վավերականության ժամկետը	ամսաթիվ	10	Այո	Այո	Լրացվում է այն տարին՝ 4-նիշ, ամիսը՝ 2-նիշ, օրը՝ 2-նիշ (yyyy-mm-dd), երբ լրանում է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» դաշտում նշված փաստաթղթի վավերականության ժամկետը:	expire_date
51*	Կազմակերպական-իրավական ձևը	թիվ		Այո	Այո	Լրացվում է իրավաբանական անձի կազմակերպական-իրավական ձևը կամ դրա հապավումը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 7 ցանկից:	leg_org_form
52*	Այլ կազմակերպական-իրավական ձև	տեքստ	մինչև 256	Այո	Այո	Լրացվում է, եթե «Կազմակերպական-իրավական ձևը» դաշտում նշվել է «Այլ»: Օտարերկրյա իրավաբանական անձանց կազմակերպական-իրավական ձևի վերաբերյալ տվյալները լրացվում են լատինատառ:	other_leg_org_form
53*	Անհատականացման (հաշվառման) համարը	տեքստ		Այո	Այո	Լրացվում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գրանցումը (հաշվառումը) իրականացնող մարմնի կողմից տրամադրված անհատականացման (հաշվառման) համարը	st_reg_number
54*	ՀՎՀՀ	տեքստ	մինչև 256 (ռեզիդենտ իրավաբանական անձի դեպքում 8 նիշ)	Այո	Այո	Լրացվում է անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նշված է նույնականացման փաստաթղթում:	tax_pay_number
55*	Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն	տեքստ		Այո	Այո	Լրացվում են գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը	manager_name
56*	Կանխարգելիչ գործողություններ	բաժին		Այո	Ոչ		susp
57*	Գույքի սառեցումը	թիվ	1	Այո	Ոչ	Լրացվում է գույքի սառեցման վերաբերյալ տեղեկատվությունը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 9 ցանկից: Գույքի սառեցման դեպքում լրացվում է 58-րդ կետը:	susp_status
58	Սառեցման ամսաթիվը	ամսաթիվ	10	Այո	Ոչ	Լրացվում է կամ գույքի սառեցման տարին՝ 4-նիշ, ամիսը՝ 2-նիշ, օրը՝ 2-նիշ (yyyy-mm-dd):	freeze_date

*-ով նշված կետերը ենթակա են պարտադիր լրացման:

*-ով չնշված կետերը ենթակա են պարտադիր լրացման սույն Հավելվածի «Լրացման կարգ» սյունակում նշված պայմանների առկայության դեպքում:

XML ՍԻՆԵՄԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԹՎԱՅԼԱՑՎԱԾ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

ԱՂՅՈՒՍԱԿ 1. ԱՐԺՈՒՅԹՆԵՐ	
UAE DIRHAM	AED
AFGHANI	AFN
LEK	ALL
ARMENIAN DRAM	AMD
NETHERLANDS ANTILLEAN GUILDER	ANG
KWANZA	AOA
ARGENTINE PESO	ARS
AUSTRALIAN DOLLAR	AUD
ARUBAN FLORIN	AWG
AZERBAIJANIAN MANAT	AZN
CONVERTIBLE MARK	BAM
BARBADOS DOLLAR	BBD
TAKA	BDT
BULGARIAN LEV	BGN
BAHRAINI DINAR	BHD
BURUNDI FRANC	BIF
BERMUDIAN DOLLAR	BMD
BRUNEI DOLLAR	BND
BOLIVIANO	BOB
MVDOL	BOV
BRAZILIAN REAL	BRL
BAHAMIAN DOLLAR	BSD
NGULTRUM	BTN
PULA	BWP
BELARUSSIAN RUBLE	BYR
BELIZE DOLLAR	BZD
CANADIAN DOLLAR	CAD
CONGOLESE FRANC	CDF
WIR EURO	CHE
SWISS FRANC	CHF
WIR FRANC	CHW
UNIDAD DE FOMENTO	CLF
CHILEAN PESO	CLP
YUAN RENMINBI	CNY
COLOMBIAN PESO	COP
UNIDAD DE VALOR REAL	COU
COSTA RICAN COLON	CRC
PESO CONVERTIBLE	CUC
CUBAN PESO	CUP
CAPE VERDE ESCUDO	CVE
CZECH KORUNA	CZK
DJIBOUTI FRANC	DJF
DANISH KRONE	DKK
DOMINICAN PESO	DOP

ALGERIAN DINAR	DZD
EGYPTIAN POUND	EGP
NAKFA	ERN
ETHIOPIAN BIRR	ETB
EURO	EUR
FIJI DOLLAR	FJD
FALKLAND ISLANDS POUND	FKP
POUND STERLING	GBP
LARI	GEL
GHANA CEDI	GHS
GIBRALTAR POUND	GIP
DALASI	GMD
GUINEA FRANC	GNF
QUETZAL	GTQ
GUYANA DOLLAR	GYD
HONG KONG DOLLAR	HKD
LEMPIRA	HNL
CROATIAN KUNA	HRK
GOURDE	HTG
FORINT	HUF
RUPIAH	IDR
NEW ISRAELI SHEQEL	ILS
INDIAN RUPEE	INR
IRAQI DINAR	IQD
IRANIAN RIAL	IRR
ICELAND KRONA	ISK
JAMAICAN DOLLAR	JMD
JORDANIAN DINAR	JOD
YEN	JPY
KENYAN SHILLING	KES
SOM	KGS
RIEL	KHR
COMORO FRANC	KMF
NORTH KOREAN WON	KPW
WON	KRW
KUWAITI DINAR	KWD
CAYMAN ISLANDS DOLLAR	KYD
TENGE	KZT
KIP	LAK
LEBANESE POUND	LBP
SRI LANKA RUPEE	LKR
LIBERIAN DOLLAR	LRD
LOTI	LSL
LITHUANIAN LITAS	LTL
LATVIAN LATS	LVL
LIBYAN DINAR	LYD
MOROCCAN DIRHAM	MAD
MOLDOVAN LEU	MDL

MALAGASY ARIARY	MGA
DENAR	MKD
KYAT	MMK
TUGRIK	MNT
PATACA	MOP
OUGUIYA	MRO
MAURITIUS RUPEE	MUR
RUFYAA	MVR
KWACHA	MWK
MEXICAN PESO	MXN
MEXICAN UNIDAD DE INVERSION (UDI)	MXV
MALAYSIAN RINGGIT	MYR
MOZAMBIQUE METICAL	MZN
NAMIBIA DOLLAR	NAD
NAIRA	NGN
CORDOBA ORO	NIO
NORWEGIAN KRONE	NOK
NEPALESE RUPEE	NPR
NEW ZEALAND DOLLAR	NZD
RIAL OMANI	OMR
BALBOA	PAB
NUEVO SOL	PEN
KINA	PGK
PHILIPPINE PESO	PHP
PAKISTAN RUPEE	PKR
ZLOTY	PLN
GUARANI	PYG
QATARI RIAL	QAR
NEW ROMANIAN LEU	RON
SERBIAN DINAR	RSD
RUSSIAN RUBLE	RUB
RWANDA FRANC	RWF
SAUDI RIYAL	SAR
SOLOMON ISLANDS DOLLAR	SBD
SEYCHELLES RUPEE	SCR
SUDANESE POUND	SDG
SWEDISH KRONA	SEK
SINGAPORE DOLLAR	SGD
SAINT HELENA POUND	SHP
LEONE	LLS
SOMALI SHILLING	SOS
SURINAM DOLLAR	SRD
SOUTH SUDANESE POUND	SSP
DOBRA	STD
EL SALVADOR COLON	SVC
SYRIAN POUND	SYP
LILANGENI	SZL
BAHT	THB

SOMONI	TJS
TURKMENISTAN NEW MANAT	TMT
TUNISIAN DINAR	TND
PA'ANGA	TOP
TURKISH LIRA	TRY
TRINIDAD AND TOBAGO DOLLAR	TTD
NEW TAIWAN DOLLAR	TWD
TANZANIAN SHILLING	TZS
HRYVANIA	UAH
UGANDA SHILLING	UGX
US DOLLAR	USD
US DOLLAR (NEXT DAY)	USN
US DOLLAR (SAME DAY)	USS
URUGUAY PESO EN UNIDADES INDEXADAS (URUIURUI)	UYI
PESO URUGUAYO	UYU
UZBEKISTAN SUM	UZS
BOLIVAR	VEF
DONG	VND
VATU	VUV
TALA	WST
CFA FRANC BEAC	XAF
SILVER	XAG
GOLD	XAU
BOND MARKETS UNIT EUROPEAN COMPOSITE UNIT (EURCO)	XBA
BOND MARKETS UNIT EUROPEAN MONETARY UNIT (E.M.U.-6)	XBB
BOND MARKETS UNIT EUROPEAN UNIT OF ACCOUNT 9 (E.U.A.-9)	XBC
BOND MARKETS UNIT EUROPEAN UNIT OF ACCOUNT 17 (E.U.A.-17)	XBD
EAST CARIBBEAN DOLLAR	XCD
SDR (SPECIAL DRAWING RIGHT)	XDR
CFA FRANC BCEAO	XOF
PALLADIUM	XPD
CFP FRANC	XPF
PLATINUM	XPT
SUCRE	XSU
CODES SPECIFICALLY RESERVED FOR TESTING PURPOSES	XTS
ADB UNIT OF ACCOUNT	XUA
THE CODES ASSIGNED FOR TRANSACTIONS WHERE NO CURRENCY IS INVOLVED	XXX
YEMENI RIAL	YER
RAND	ZAR
ZAMBIAN KWACHA	ZMW
ZIMBABWE DOLLAR	ZWL

ԱՂՅՈՒՍԱԿ 2. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ	
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ (ԲԱԺՆԵՀԱՎԱՔ և ԱՅԼՆ) ԿԱՊԻՏԱԼԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ	101
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ (ԲԱԺՆԵՀԱՎԱՔ և ԱՅԼՆ) ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ԲԱԺՆԵՄԱՍԻ (ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅԱՆ, ՓԱՅԻ և ԱՅԼՆ) ՕՏԱՐՄԱՆ (ՁԵՆՔԲԵՐՄԱՆ) ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ	102
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ (ԲԱԺՆԵՀԱՎԱՔ և ԱՅԼՆ) ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ	103

ԱՂՅՈՒՍԱԿ 3. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ	
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑ	201
ԱՐԺԵԹՈՒՂԹ	202
ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔ	203
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ	204
ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ	205
ԴՐԱՄԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՅԼ ԻՐԱՎՈՒՆՔ	206

ԱՂՅՈՒՍԱԿ 4 . ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ՉԱՓԱՆԻՇԸ ԿԱՄ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	
ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԵԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓԱՆԻՇ ԿԱՄ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	cr1
ԱՅԼ	cr2

ԱՂՅՈՒՍԱԿ 5. ԵՐԿՐՆԵՐ	
AFGHANISTAN	AF
ALAND ISLANDS	AX
ALBANIA	AL
ALGERIA	DZ
AMERICAN SAMOA	AS
ANDORRA	AD
ANGOLA	AO
ANGUILLA	AI
ANTARCTICA	AQ
ANTIGUA AND BARBUDA	AG
ARGENTINA	AR
ARMENIA	AM
ARUBA	AW
AUSTRALIA	AU
AUSTRIA	AT
AZERBAIJAN	AZ
BAHAMAS	BS
BAHRAIN	BH
BANGLADESH	BD
BARBADOS	BB
BELARUS	BY
BELGIUM	BE
BELIZE	BZ
BENIN	BJ
BERMUDA	BM
BHUTAN	BT
BOLIVIA, PLURINATIONAL STATE OF	BO
BONAIRE, SINT EUSTATIUS AND SABA	BQ
BOSNIA AND HERZEGOVINA	BA
BOTSWANA	BW
BOUVET ISLAND	BV
BRAZIL	BR
BRITISH INDIAN OCEAN TERRITORY	IO
BRUNEI DARUSSALAM	BN
BULGARIA	BG

BURKINA FASO	BF
BURUNDI	BI
CÔTE D'IVOIRE	CI
CAMBODIA	KH
CAMEROON	CM
CANADA	CA
CAPE VERDE	CV
CAYMAN ISLANDS	KY
CENTRAL AFRICAN REPUBLIC	CF
CHAD	TD
CHILE	CL
CHINA	CN
CHRISTMAS ISLAND	CX
COCOS (KEELING) ISLANDS	CC
COLOMBIA	CO
COMOROS	KM
CONGO	CG
CONGO, THE DEMOCRATIC REPUBLIC OF THE	CD
COOK ISLANDS	CK
COSTA RICA	CR
CROATIA	HR
CUBA	CU
CURAÇAO	CW
CYPRUS	CY
CZECH REPUBLIC	CZ
DENMARK	DK
DJIBOUTI	DJ
DOMINICA	DM
DOMINICAN REPUBLIC	DO
ECUADOR	EC
EGYPT	EG
EL SALVADOR	SV
EQUATORIAL GUINEA	GQ
ERITREA	ER
ESTONIA	EE
ETHIOPIA	ET
FALKLAND ISLANDS (MALVINAS)	FK
FAROE ISLANDS	FO
FIJI	FJ
FINLAND	FI
FRANCE	FR
FRENCH GUIANA	GF
FRENCH POLYNESIA	PF
FRENCH SOUTHERN TERRITORIES	TF
GABON	GA
GAMBIA	GM
GEORGIA	GE
GERMANY	DE

GHANA	GH
GIBRALTAR	GI
GREECE	GR
GREENLAND	GL
GRENADA	GD
GUADELOUPE	GP
GUAM	GU
GUATEMALA	GT
GUERNSEY	GG
GUINEA	GN
GUINEA-BISSAU	GW
GUYANA	GY
HAITI	HT
HEARD ISLAND AND MCDONALD ISLANDS	HM
HOLY SEE (VATICAN CITY STATE)	VA
HONDURAS	HN
HONG KONG	HK
HUNGARY	HU
ICELAND	IS
INDIA	IN
INDONESIA	ID
IRAN, ISLAMIC REPUBLIC OF	IR
IRAQ	IQ
IRELAND	IE
ISLE OF MAN	IM
ISRAEL	IL
ITALY	IT
JAMAICA	JM
JAPAN	JP
JERSEY	JE
JORDAN	JO
KAZAKHSTAN	KZ
KENYA	KE
KIRIBATI	KI
KOREA, DEMOCRATIC PEOPLE'S REPUBLIC OF	KP
KOREA, REPUBLIC OF	KR
KUWAIT	KW
KYRGYZSTAN	KG
LAO PEOPLE'S DEMOCRATIC REPUBLIC	LA
LATVIA	LV
LEBANON	LB
LESOTHO	LS
LIBERIA	LR
LIBYA	LY
LIECHTENSTEIN	LI
LITHUANIA	LT
LUXEMBOURG	LU
MACAO	MO

MACEDONIA, THE FORMER YUGOSLAV REPUBLIC OF	MK
MADAGASCAR	MG
MALAWI	MW
MALAYSIA	MY
MALDIVES	MV
MALI	ML
MALTA	MT
MARSHALL ISLANDS	MH
MARTINIQUE	MQ
MAURITANIA	MR
MAURITIUS	MU
MAYOTTE	YT
MEXICO	MX
MICRONESIA, FEDERATED STATES OF	FM
MOLDOVA, REPUBLIC OF	MD
MONACO	MC
MONGOLIA	MN
MONTENEGRO	ME
MONTSERRAT	MS
MOROCCO	MA
MOZAMBIQUE	MZ
MYANMAR	MM
NAGORNO-KARABAKH REPUBLIC	NK
NAMIBIA	NA
NAURU	NR
NEPAL	NP
NETHERLANDS	NL
NEW CALEDONIA	NC
NEW ZEALAND	NZ
NICARAGUA	NI
NIGER	NE
NIGERIA	NG
NIUE	NU
NORFOLK ISLAND	NF
NORTHERN MARIANA ISLANDS	MP
NORWAY	NO
OMAN	OM
PAKISTAN	PK
PALAU	PW
PALESTINE, STATE OF	PS
PANAMA	PA
PAPUA NEW GUINEA	PG
PARAGUAY	PY
PERU	PE
PHILIPPINES	PH
PITCAIRN	PN
POLAND	PL
PORTUGAL	PT

PUERTO RICO	PR
QATAR	QA
RÉUNION	RE
ROMANIA	RO
RUSSIAN FEDERATION	RU
RWANDA	RW
SAINT BARTHÉLEMY	BL
SAINT HELENA, ASCENSION AND TRISTAN DA CUNHA	SH
SAINT KITTS AND NEVIS	KN
SAINT LUCIA	LC
SAINT MARTIN (FRENCH PART)	MF
SAINT PIERRE AND MIQUELON	PM
SAINT VINCENT AND THE GRENADINES	VC
SAMOA	WS
SAN MARINO	SM
SAO TOME AND PRINCIPE	ST
SAUDI ARABIA	SA
SENEGAL	SN
SERBIA	RS
SEYCHELLES	SC
SIERRA LEONE	SL
SINGAPORE	SG
SINT MAARTEN (DUTCH PART)	SX
SLOVAKIA	SK
SLOVENIA	SI
SOLOMON ISLANDS	SB
SOMALIA	SO
SOUTH AFRICA	ZA
SOUTH GEORGIA AND THE SOUTH SANDWICH ISLANDS	GS
SOUTH SUDAN	SS
SPAIN	ES
SRI LANKA	LK
SUDAN	SD
SURINAME	SR
SVALBARD AND JAN MAYEN	SJ
SWAZILAND	SZ
SWEDEN	SE
SWITZERLAND	CH
SYRIAN ARAB REPUBLIC	SY
TAIWAN, PROVINCE OF CHINA	TW
TAJIKISTAN	TJ
TANZANIA, UNITED REPUBLIC OF	TZ
THAILAND	TH
TIMOR-LESTE	TL
TOGO	TG
TOKELAU	TK
TONGA	TO
TRINIDAD AND TOBAGO	TT

TUNISIA	TN
TURKEY	TR
TURKMENISTAN	TM
TURKS AND CAICOS ISLANDS	TC
TUVALU	TV
UGANDA	UG
UKRAINE	UA
UNITED ARAB EMIRATES	AE
UNITED KINGDOM	GB
UNITED STATES	US
UNITED STATES MINOR OUTLYING ISLANDS	UM
URUGUAY	UY
UZBEKISTAN	UZ
VANUATU	VU
VENEZUELA, BOLIVARIAN REPUBLIC OF	VE
VIET NAM	VN
VIRGIN ISLANDS, BRITISH	VG
VIRGIN ISLANDS, U.S.	VI
WALLIS AND FUTUNA	WF
WESTERN SAHARA	EH
YEMEN	YE
ZAMBIA	ZM
ZIMBABWE	ZW
NO VALUE	NV

ԱՂՅՈՒՍԱԿ 6. ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՏԵՍԱԿՆԵՐ	
ԱՆՁՆԱԳԻՐ	AND
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԳՐՔՈՒՅԿ	ZIG
ՀՀ ՔԱՂԱՔԱՅՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՏՐՎՈՂ՝ ԱՆՁԸ (ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ) ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ	JTP
ԾՆՆԴՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ	CVK
ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՏՈՂԻ ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՎԿԱՅԱԿԱՆ	PVK
ՓԱԽՍՏԱԿԱՆ ՃԱՆԱԶՎԱԾ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՊԱՍՏԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՆՎԵՆՑԻՈՆ ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ	PCP
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԳԻՐ	OTA
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՅՈՒ (ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ) ՀԱՍՏԱՏՈՂ ՄԻՋԱԶԳԱՅՆՈՐԵՆ ՃԱՆԱԶՎԱԾ ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ	AHP
ՀՀ ՀԱՏՈՒԿ ԱՆՁՆԱԳԻՐ	HHA
ՀՀ-ՈՒՄ ՄՇՏԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏ	MKQ
ՀՀ-ՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏ	JKQ
ՀՀ-ՈՒՄ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՅՈՂ ԱՆՁԻ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ	KAC
ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՅՈՂ ԱՆՁԻՆ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ	CHP
ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏ	NID

ԱՂՅՈՒՍԱԿ 7. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ԶԵՎԵՐ	
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	1
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	2
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	3
ԼՐԱՑՈՒՑԻԶ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	4
ԿՈՂՄԵՐԱՏԻՎ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	5
ԼԻԱԿԱՏԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	6
ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	7

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ	8
ՀԻՄՆԱԴՐԱՄ	9
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ	10
ԱՅԼ	11
ԱՌԿԱ ՉԷ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	12

ԱՂՅՈՒՍԱԿ 8. ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ	
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ	1
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ	2

ԱՂՅՈՒՍԱԿ 9. ԱՅՈ/ՈՉ	
ԱՅՈ	1
ՈՉ	2

ԱՂՅՈՒՍԱԿ 10. ԳՈՐԾԱՐՔԻ ԿՈՂՄԵՐ	
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ	4
ՀԱՃԱԽՈՐԴ	1
ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ	2
ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ	3

ԱՂՅՈՒՍԱԿ 11. ԳՈՐԾԱՐՔԻ ԿՈՂՄԻ ՏԵՍԱԿՆԵՐ	
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ	1
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ	2
ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ	3

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ
փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին***

Նպատակ ունենալով տնտեսական նորմատիվների հաշվարկման վերաբերյալ տեղեկատվությունը համապատասխանեցնելու կիրառվող մեթոդաբանությանը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածը,

նկատարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին» թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
- 1) Կանոնակարգ 3-ի 2-րդ կետի աղյուսակի 3-րդ տողի «Ն1.1, Ն1.2» բառերը փոխարինել «Ն1¹, Ն1², Ն₁,» բառերով,
- 2) Կանոնակարգ 3-ի 2-րդ կետի աղյուսակի 11-րդ տողի «ամսական, եռամսյակային, տարեկան» բառերը փոխարինել «ամսական» բառով,
- 3) Կանոնակարգ 3-ի 3-րդ կետի «կարգերին» բառից հետո լրացնել «(այսուհետ՝ Ակտիվների դասակարգման և պահուստավորման կարգ)» բառերով,
- 4) Կանոնակարգ 3-ի 6-րդ կետի «Հաշվետվությունում հաշվեկշռային ֆինանսական գործիքները ընդգրկվում են համախառն հաշվեկշռային մնացորդներով:» նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հաշվետվությունում հաշվեկշռային ֆինանսական գործիքները ընդգրկվում են համախառն հաշվեկշռային մնացորդներով: Հաշվետվությունում ներկայացվող ակտիվների հնարավոր կորուստների պահուստների (պահուստ) մեծությունները չեն ներառում Ակտիվների դասակարգման և պահուստավորման կարգի համաձայն ձևավորված ընդհանուր պահուստները:»,
- 5) Կանոնակարգ 3-ի 6-րդ կետի «1-ից 10-րդ սյունակներում, բացառությամբ 8-րդ սյունակի, ամփոփվում են, համապատասխանաբար, հիմնական կապիտալի, ընդհանուր կապիտալի, ընդհանուր ակտիվների, վարկային ռիսկի, արտարժույթային ռիսկի, տոկոսադրույքի ռիսկի, կապիտալի գործիքների գնային ռիսկի, բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների նորմատիվային միջին ամսական մեծությունները, իսկ 8-րդ սյունակում՝ գործառնական ռիսկի նորմատիվային մեծությունը:» նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

* Ոչ պաշտոնական հրապարակություն:

Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2023 թ. մայիսի 30-ին (ՀՀԳՏ, 06.06. 2023):

«1-ից 10-րդ սյունակներում, բացառությամբ 8-րդ սյունակի, ամփոփվում են, համապատասխանաբար, առաջին մակարդակի հիմնական կապիտալի, առաջին մակարդակի կապիտալի, ընդհանուր կապիտալի, ընդհանուր ակտիվների, վարկային ռիսկի, արտարժույթային ռիսկի, տոկոսադրույքի ռիսկի, կապիտալի գործիքների գնային ռիսկի, բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների նորմատիվային միջին ամսական մեծությունները, իսկ 8-րդ սյունակում՝ գործառնական ռիսկի նորմատիվային մեծությունը:»

- 6) Կանոնակարգ 3-ի 6-րդ կետի «2-րդ էջում ներկայացվում են ընդհանուր կապիտալի ու նրա տարրերի հաշվեկշռային և նորմատիվային մեծությունները, ինչպես նաև նորմատիվային մեծությունների հաշվարկի համար Կանոնակարգ 2-ով նախատեսված անհրաժեշտ պակասեցումները և ավելացումները՝ ըստ ամսվա բոլոր օրերի: Նորմատիվային լրացուցիչ կապիտալի հաշվարկում չընդգրկվող գումարներն այն գումարներն են, որոնք հաշվառվում են որպես կապիտալ (Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 322-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 1032-Ն համատեղ հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի, ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի» «5000» կարգ), սակայն համաձայն Կանոնակարգ 2-ի՝ չեն մտնում նորմատիվային լրացուցիչ կապիտալի հաշվարկի մեջ: Նորմատիվային լրացուցիչ կապիտալի հաշվարկում ընդգրկվող գումարներն այն գումարներն են, որոնք չեն հաշվառվում որպես կապիտալ (Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի օգոստոսի 6-ի թիվ 258-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի օգոստոսի 27-ի թիվ 629-Ն հրամանով համատեղ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշվային պլանի» 5-րդ կարգի հաշիվներում), սակայն համաձայն Կանոնակարգ 2-ի՝ ընդգրկվում են նորմատիվային լրացուցիչ կապիտալի հաշվարկում:» նախադասությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2-րդ էջում ներկայացվում են ընդհանուր կապիտալի և նրա տարրերի հաշվարկն ըստ օրերի: 1-4-րդ սյունակներում լրացվում է Կանոնակարգ 2-ով սահմանված նորմատիվային կապիտալում ներառվող տարրերի հաշվեկշռային մեծությունների գումարը: 8-րդ սյունակում լրացվում են Կանոնակարգ 2-ով սահմանված առաջին մակարդակի հիմնական կապիտալը ճշգրտող գումարները, ընդ որում, բացասական մեծությունները լրացվում են «-» նշանով:»,

- 7) Կանոնակարգ 3-ի 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«Թիվ 11 հաշվետվությունում ներկայացվում է Կանոնակարգ 2-ով սահմանված նորմատիվային ընդհանուր կապիտալի կազմի մեջ մտնող և նվազեցվող (ճշգրտվող) տարրերի մեծությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Հաշվետվությունում փաստացի վճարված (բաշխված) շահութաբաժին է համարվում այն շահութաբաժինը, որն արդեն իսկ նվազեցվել է չբաշխված շահույթից:»,
- 8) Կանոնակարգ 3-ի 32-րդ կետի «հաշվետվություն թիվ 6-ի համապատասխանաբար Աղյուսակներ 1-ից 16-ի լրացման հրահանգի» բառերը փոխարինել «թիվ 6 հաշվետվության համապատասխան աղյուսակների լրացման հրահանգի» բառերով:
- 9) Կանոնակարգ 3-ի ձև թիվ 3 հաշվետվության.
ա. 1-ին էջը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի,
բ. 2-րդ էջը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի,
- 10) Կանոնակարգ 3-ի ձև թիվ 11-րդ հաշվետվությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 3-ի:
- 11) Կանոնակարգ 3-ի ձև թիվ 41-րդ հաշվետվության.

- ա. «Հիմնական կապիտալի տարրեր» բառերը փոխարինել «Առաջին մակարդակի կապիտալի տարրեր» բառերով,
- բ. «Լրացուցիչ կապիտալի տարրեր» բառերը փոխարինել «Երկրորդ մակարդակի կապիտալի տարրեր» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից և տարածվում է հունիսի 1-ից սկսած հաշվետու ժամանակահատվածի համար ներկայացվող հաշվետվությունների վրա:

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
նախագահի տեղակալ Հովհաննես Խաչատրյան
1 հունիսի 2023 թ., N 72-Ն**

ՀԱՎԵԼՎԱԾ 3
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2023 թվականի մայիսի 30-ի
թիվ 72-Ն որոշմամբ

Հաստատված է
